

ՍԱՂՄՈՍ 45

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թագավորի ամուսնության տոնական-տարության երգ	Մեսիայի և Նրա Հարսի փառքերը	Թագավորական հարսանիքի գովերգ	Թագավորական հարսանիքի երգ	Թագավորական Հարսանիք
<u>MT ներածություն</u> Կորիսի որդիների քերթվածքը. «Շուշանների եղանակով»: Սիրո երգ				
45:1-2	45:1-5	45:1	45:1	45:1
		45:2-3	45:2-3	45:2
45:3-5				45:3ա-4ա
		45:4-5	45:4-5	45:4բ-5
45:6-9	45:6-9	45:6-9	45:6-9	45:6-7ա
				45:7բ-8ա
				45:8բ-9
45:10-12	45:10-12	45:10-13ա	45:10-12	45:10-13ա
45:13-15	45:13-17	45:13բ-15	45:13-15	45:13բ-16
45:16-17		45:16-17	45:16-17	
				45:17

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը փառաբանում է մի իսրայելացի՝

1. Հավանաբար Սողոմոնը՝ իր ամուսնություններից մեկի ժամանակ (NASB լուսանցք)
2. Աքաբը և նրա ամուսնությունը Հեզաբելի հետ (Հրեական Սերտոդության Աստվածաշունչը, էջ՝ 1332)
3. Դավիթը (Իբն Եզրաս)
4. Մեսիան (Իբն Եզրասի երկրորդ ընտրությունը և Եկեղեցու հայրերը):

Բ. Այս Սաղմոսը ոմանց կողմից դիտարկվել է որպես Մեսիական (ուշադրություն դարձրե՛ք մեծատառ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻՆ), սակայն միայն աստվածաբանական իմաստով: Պատմականորեն այն համապատասխանում է՝

1. ՀՄԱ-ի թագավորական լեզվի չափազանցությանը
2. Սողոմոնի ամուսնությանը պետք է որ մասնակցեին իր տիրակալության ներքո գտնվող բոլոր կայսրություններից եկած մարդիկ:

Գ. Իսրայելացի բոլոր թագավորների նպատակը պետք է լիներ ներկայացնել ՅԱՀՎԵԻՆ (տես՝ 1 Թագ. 8:6-7): Նա է տիեզերքի Թագավորը և նրանք պետք է առաջնորդեին Նրա ժողովրդին (օրինակով) Նրա օրենքի մեջ:

Դ. NASB Սերտոդության Աստվածաշունչը (էջ՝ 784) ենթադրում է, որ հեղինակը Ղևտացի երգիչ էր և որ նրա այս երգը համարվում էր տաճարից դուրս եկող երգ (այսինքն՝ հենց Աստծուց): Ահա թե ինչպես է բացատրվում Աստծո և Թագավորի միջև տերմինաբանության սահունությունը:

Ե. Սաղմոս 45 ունի՝

1. իրար հետ կապակցված բացում (Սաղմ. 45:1-2) և ավարտ (Սաղմ. 45:16-17)
2. անդրադարձ թագավորին, Սաղմ. 45:3-9
3. անդրադարձ հարսին, Սաղմ. 45:10-15

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 45:1-2

¹Իմ սիրտը բարի նյութով է հորդում,

Ես արտասանում եմ արքայի մասին իմ շարադրանքը .

Լեզուս ճարտար գրողի գրիչ է:

²Դու մարդկանց որդիներից ավելի գեղեցիկ ես .

Քո շուրթերից շնորհք է հոսում,

Դրա համար քեզ Աստված օրհնեց հավիտյան:

45:1 Հեղինակն այս համարում նկարագրում է իրեն իր ընթերցողների համար (Սաղմոսներում միայն այստեղ):

1. իր սիրտը (այսինքն՝ հենց ինքը) հորդում է (BDB 935, KB 1222, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, LXX տալիս է «ժայթքում է») բարի նյութով (այսինքն՝ Աստծո ժողովրդի Թագավորի համար փառաբանությամբ)
2. նա գրում է փառաբանել Թագավորին իր ամուսնության ժամանակ
3. նրա լեզուն ճարտար գրողի գրիչի պես է (այսինքն՝
ա. նա փափագում էր փառաբանել Թագավորին
բ. նա պալատական պոետ էր կամ դպիր, տես՝ Եզրաս 7:6)

45:2 Նա նկարագրում է Թագավորին իր բանաստեղծական պատկերավոր լեզվով՝

1. նա ավելի գեղեցիկ է (այսինքն՝ «ավելի գեղեցկադեմ», տես՝ NRSV, TEV, NJB, այս բառը [BDB 421, KB 421] հազվադեպ է գործածվում մարդկանց համար. այն *Pealal* ՎԱՂԱԿԱՏԱՐ հազվադեպ ձևն է), քան մյուս մարդիկ (բառացի՝ «մարդկանց որդիները»):
2. նա պերճախոս է (TEV) և ողորմած (տես՝ Առակ. 22:11, Ժող. 10:12): Կարծում եմ Սաղմ. 45:4q համագոր է:
3. դրա համար Աստված օրհնել է Քեզ հավիտյան. երկու միտք այս մասին՝
ա. ճանաչի՛ր ՀՄԱ-ի չափազանցություններին՝ թագավորական լեզվին
բ. զգույշ եղի՛ր պատճառահետևանքային տրամաբանության հետ (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ օրհնեց նրան, քանի որ նա ճիշտ էր վարվում): Մուրբ Գրքում Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև լարվածություն կա (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ՀԱՎԱՍԱՐԱԿԾ-ՈՒԹՅՈՒՆԸ): Հնագանդությունը կարևոր է, սակայն կանչը՝ վճռորոշ: Նա Թագավոր չէր, քանի որ արժանի էր դրան, այլ որ իր ընտանեկան կարգավիճակն էր թագավորական:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 45:3-5

³Կապի՛ր սուրդ մեջքիդ, ո՛վ Հգոր,

Քո փառքով ու քո վայելչությամբ:

⁴Ու քո մեծափառության հաջողությամբ ձիավարի՛ր,

Հանուն ճշմարտության ու հեզության և արդարության,

Ու քո աջ ձեռքը քեզ ահավոր բաներ կտվորեցնի:

⁵Քո նետերը սուր են թագավորի թշնամիների սրտի մեջ,

Ժողովուրդները քո տակն են ընկնելու:

45:3-5 Այս պարբերությունը բանաստեղծական պատկերավոր նկարագրություն է Թագավորի ռազմական հաղթանակների մասին: Նկատե՛ք, որ նա ներկայացնում է ՅԱՀՎԵՆ երբ պատերազմում է (LXX)՝

1. «ճշմարտության» համար (BDB 54)
2. «հեզության» (անսովոր ձայնավորի նշան, BDB 776, տես՝ Առակ. 15:33, 18:12, 22:4, Սոփ. 2:3): Ուշադրություն դարձրե՛ք երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ և երկու ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԻՆ, որոնք արտացոլում են ռազմական տեսարանը:
 1. կապի՛ր սուրդ մեջքիդ - BDB 291, KB 291, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 45:3, տես՝ 2 Օր. 1:41, Դատ. 3:16, 18:11, 1 Թագ. 17:39, 25:13
 2. հաջողությամբ՝ հաղթանակով ձիավարի՛ր, Սաղմ. 45:4
 3. նույնը ինչ #2
ա. հաջողակ եղի՛ր – BDB 852, KB 1026, *Qal* ՀՐԱՄԱԿԱՅԱՆ
բ. «ձիավարի՛ր» - BDB 938, KB 1230, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
 4. Քո աջ ձեռքը կտվորեցնի, Սաղմ. 45:4 – BDB 434, KB 436, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
 5. Ժողովուրդները Քո տակն են ընկնելու, Սաղմ. 45:5 – BDB 656, KB 709, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

45:3 «Փառք» (BDB 217 I) և «վայելչություն» (BDB 214) բառերը հաճախ են համադրվում Աստծո հետ (այսինքն՝ Սաղմ. 104:1): Նկատե՛ք, թե ինչպես է NASB մեծատառերով գրում ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ Սաղմ. 45:2,3,4,5,6,7,8,9-ում: Սակայն դրանք նաև կիրառվում են իսրայելացի թագավորի համար (այսինքն՝ Սաղմ. 21:5):

❖
NASB, NKJV, NRSV
TEV

«Ո՛վ Հգոր»
«Հգոր Թագավոր»

NJB
JPSOA
REB
LXX

«Պատերազմող»
«Ով հերոս»
«պատերազմող թագավոր»
«Ով զորեղ»

Այս ԱԾԱԿԱՆԱԸ (BDB 150) հիմնականում նշանակում է «ուժեղ» կամ «զորեղ»: Այն կիրառվում էր՝

1. մարդ ռազմիկների համար – Ծննդ. 10:9, Սաղմ. 78:65, 120:4, 127:4, Ժող. 9:11, Երգ 3:7
2. Մեսիա – Ես. 9:5 (Դավիթը որպես տիպար՝ Սաղմ. 89:20)
3. ՅԱՀՎԵՆ որպես ուխտի հավատարիմ ռազմիկ (այսինքն՝ սուրբ պատերազմ)՝ Նեեմ. 9:32, Սաղմ. 24:8, Ես. 10:21, Երեմ. 32:18

Այս համատեքստում սա վերաբերում է Դավթի սերնդից Թագավորին՝ որպես հաղթանակած պատերազմող՝ ՅԱՀՎԵՆ կողմից գորացած:

45:4-5 ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ դժվար է այստեղ տարբերակել՝

1. ոմանք վերաբերում են Աստծուն
2. ոմանք էլ՝ Թագավորին

Այս նույն շփոթությունը Սաղմ. 45:6-7-ում է: Խնդիրն այն է, որ հեղինակը Թագավորին նկարագրում է որպես հենց ՅԱՀՎԵՆ ներկայացուցիչը: Ակնհայտ է, թե ինչպես են առաջին Զրիստոնյա հեղինակները (այսինքն՝ Եբր. 1:8-9) դիտարկել սա որպես Մեսիական Սաղմոս: Նրանց համար Մեսիան եկել էր և ՀԿ-ը մատնացույց էր անում Նրան (այսինքն՝ Հիսուսին):

45:4

NASB, NKJV
NRSV
TEV
JPSOA, REB
LXX

«հրաշալի բաներ»
«ահավոր գործեր»
«մեծ հաղթանակներ»
«սքանչելի գործեր»
«սքանչությամբ»

Այս ԴԵՐԱԲԱՅԸ (BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԱԲԱՅ) նշանակում է «ահ ներշնչող գործեր»:

1. Աստված Ինքը – 2 Օրինաց 1:19, 7:21, 10:20-21
2. Նրա գործերը – 2 Թագ. 7:23, Սաղմ. 145:6 (Կարմիր Ծովը կիսվելը, Սաղմ. 106:22):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 45:6-9

⁶Ո՛վ Աստված, Քո գահը հավիտյանս հավիտենից է:
Քո թագավորության գավազանը ուղղության գավազան է:
⁷Դու արդարությունը սիրում ես, իսկ անօրենությունն ատում.
Դրա համար էլ Աստված՝ Քո Աստվածը,
Քեզ ուրախության յուղով օծեց Քո ընկերակիցներից ավելի:
⁸Քո բոլոր հանդերձներից զմուռս ու հավե և կասիա է բուրում,
Փղոսկրյա պալատներից, որով Քեզ ուրախացրին:
⁹Արքայադուստրերը քո պատվավոր տիկնանց մեջ են.
Թագուհին քո աջ կողմն է կանգնում՝
Ուփրի ոսկով զարդարված:

45:6-9 Այստեղ դարձյալ մի պարբերություն է, որն անդրադառնում է թե՛ ՅԱՀՎԵՆ, և թե՛ Նրա արքայական ներկայացուցչին՝ համատեղ կարգով:

45:6

NASB, NKJV, NRSV, LXX
NRSV լուսանցք
TEV

«Քո գահը, ո՛վ Աստված»
«Քո գահը Աստծո գահ է»
«Թագավորությունը, որ Աստված տվել է քեզ»

NJB
JPSOA, RSV
REB
NEB

«**Քո գահը Աստուծուց է**»
«**Քո աստվածային գահը**»
«**Աստված գահակալել է քեզ**»
«**Քո գահը Աստծո գահի պես է**»

Դուք կարող եք տեսնել թարգմանությունների բազմազանությունից, որ երբայերեն տեքստը անորոշ է (JPSOA ծանոթագրություն): Մոնոթեիստիկ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ) ՀԿ-յան համատեքստում սա չի կարող վերագրել աստվածություն Թագավորին, այլ հայտարարում է, որ այն ինչ Թագավորը ունի և է՝ գալիս է ՅԱՀՎԵԻ հետ իր փոխհարաբերությունից: Թագավորը ՅԱՀՎԵԻ երկրավոր ներկայացուցիչն է, ինչպես Քահանայապետը (տես՝ Չաբարիա 4):

ՅԱՀՎԵԻ գահը (տես՝ 1 Մնաց. 29:23, Ողբ 5:19) հավիտյան է (տես՝ Սաղմ. 93:2, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)): Թագավորի գահը ցմահ է: Մեսիան հատուկ եկող Թագավորն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԵԿՈՂԻ ՀԱՄԱՐ): Այս արտահայտությունն ունի մեկ նշանակություն ՀԿ-ում և ավելի ամբողջական նշանակությունը՝ ՆԿ-ում:

45:7 Մեկը կարող է հարցնել, թե արդյոք սա թագավորական չափազանցություն է, թե՛ այս Սաղմոսը իրոք անդրադառնում է աստվածային Թագավորին: Եթե այն դիմում է Աբաբին, ապա համարվում է արքայական չափազանցություն՝ հիպերբոլ. եթե Սողոմոնին՝ այն ճիշտ կարող էր լինել սկզբում, բայց ոչ՝ հետագայում. եթե Դավթին՝ ապա ճիշտ կլիներ սկզբի համար և առնվազն ոչ իր մեղանչելու ժամանակահատվածում (այսինքն՝ Բերսաբե, Ուրիա):

Մենք պետք է միշտ գույշ լինենք Աստծո օրհնությունները մարդկանց իրենց գործերի համար վերագրելու հարցում: Աստված օձել էր Թագավորին փրկագործության Իր սեփական նպատակների և հայտնության համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

Եվս մեկ՝ վերջին միտքը, Սաղմ. 45:7-ը հստակ ցույց է տալիս, որ 45:6 չի վերաբերում Աստծուն՝ որպես իսրայելացի թագավոր: Եբրայեցիների 1:8-9 սա դիտարկում է որպես Դավթի արքայական տիպաբանություն:

❖ Ինչպես որ ՅԱՀՎԵՆ սիրում է արդարությունը (տես՝ Սաղմ. 11:7, 33:5), այնպես էլ Նրա երկրավոր ներկայացուցիչը՝ իսրայելացի թագավորը (այսինքն՝ Նրա օձյալը, տես՝ Սաղմ. 2:2):

45:8
NASB, NKJV, NRSV
TEV, NJB, REB

«**կասիա**»
«**-բաց է թողնում այս բառը-**»

Այս համեմունքը (BDB 893 I) ՀԿ-ում միջան այստեղ է նշվում: Այն կարող է վերաբերել դարչնի բույրին:

45:9 Արդյո՞ք այս համարը ակնարկում է, որ տվյալ պահին տեղի ունեցող հարսանիքում կային՝

1. արքայադուստրեր
2. այլ կանայք՝ հարճեր
3. Թագուհի (հազվադեպ բառ, BDB 993, տես՝ Նեեմ. 2:6):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 45:10-12

¹⁰Ո՛վ դուստր, լսի՛ր ու տե՛ս, և խոնարհի՛ր քո ականջը,

Նաև մոռացի՛ր քո ժողովրդին ու քո հոր տունը:

¹¹Այն ժամանակ թագավորը մեծապես կցանկանա քո գեղեցկությունը,

Քանի որ նա է քո ՏԵՐԸ. պաշտի՛ր Նրան:

¹²Եվ Տյուրոսի աղջիկն այնտեղ է լինելու իր ընծայով,

Ժողովրդի հարուստներն անգամ խնդրելու են քո շնորհքը:

45:10-12 Սա այն պարբերությունն է, որից ենթադրվում է, որ ամուսնությունը օտարազգի օրիորդի հետ էր, որը համապատասխանում է՝

1. Դավթին – եթե Բերսաբեն հրեա չէր
2. Սողոմոնին – իր բազմաթիվ օտարազգի կանայք (տես՝ 3 Թագ. 11:1-8)
3. Աքաբին, որն ամուսնացավ Հեզաբելի հետ՝ Տյուրոսցի արքայադստեր (տես՝ Սաղմ. 45:12):

45:10 Այս համարն ունի չորս ՀՐԱՄԱՅԱԿԱՆ:

1. լսի՛ր – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ուշադի՛ր եղի՛ր (բառացի՝ «տե՛ս») – BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. խոնրի՛ր ականջդ – BDB 639, KB 692, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Առակ. 22:17
4. մոռացի՛ր քո ժողովուրդը – BDB 1013, KB 1489, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 45:13-15

¹³Թագավորի աղջիկը ներքուստ ամբողջապես փառավոր է,

Նրա հանդերձը ոսկեհում է:

¹⁴Ասեղնագործ հանդերձով է բերվելու թագավորի մոտ.

Նրան հետևող կույս ընկերակիցները քեզ մոտ են բերվելու:

¹⁵Ցնծությամբ և ուրախությամբ են բերվելու,

Նրանք թագավորի պալատն են մտնելու:

45:13-15 Սա վերաբերում է հարեմից («կույսեր») հարսանյաց խնջույքին: Մյուս կանայք (բացի Թագուհուց) անվանվում են «աղջիկներ» (տես՝ Սաղմ. 45:9,10,12,13):

Այս պարբերությունը հոգևոր երանգ է ստացել Եկեղեցու կողմից, որպես իրեն վերաբերող: Այս նույնը կատարվել է Երգ Երգոցի հետ (Օրհներգեր):

45:13

NASB, NKJV

«ներքուստ»

JPSOA

«մեջ»

MT տալիս է «ներքուստ» (מִבְּתֵּינֵי, BDB 819, LXX), սակայն որոշ գիտնականներ ենթադրում են «մարգարիտներ» (מִבְּתֵּינֵי, BDB 819, տես՝ Հոր 28:18, Առակ. 3:15, 8:11, 31:10, Ողբ 4:7):

UBS Տեքստային Նախագիծը գնահատում է MT տարբերակը “A”:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 45:16-17

¹⁶Քո հայրերի փոխարեն որդիներդ են լինելու,

Ամբողջ երկրի մեջ նրանց իշխաններ ես դարձնելու:

¹⁷Քո անունը հիշվելու է բոլոր սերունդների մեջ.

Դրա համար քեզ ժողովուրդները գովելու են հավիտյանս հավիտենից:

45:16-17 UBS *Ձեռնարկը*՝ էջ՝ 429, ունի լավ ամփոփիչ խոսք:

«Այս պոետները եզրափակում են դիմելով թագավորին, նրան խոստանալով, որ նա շատ որդիներ է ունենալու, ովքեր՝ իր նախահայրերի պես, նույնպես լինելու են թագավորներ և իշխելու են ամբողջ երկրի վրա»:

Սաղմոս 45:17 հաստատելու մի կերպ է, որ այս Սաղմոսը երկար է ապրելու և երկար պահելու է թագավորի կենդանի հիշատակը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է

քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ են կարծում, որ սա արքայական հարսանիքի երգ է:
2. Արդյո՞ք Սաղմ .45:6 վերաբերում է իսրայելացի թագավորի:
3. Ինչո՞ւ են կարծում, որ հարսնացուն Իսրայելից չէ:
4. Բացատրե՛ք Սաղմ .45:16-17 ձեր իսկ բառերով:
5. Սահմանե՛ք «Քո գահը, ո՛վ Աստված» խոսքը և բացատրե՛ք, թե ինչպես է Եբրայեցիների 1:8-9 կիրառում այն:
6. Ինչո՞ւ են կարծում, որ այս Սաղմոսը Մեսիական է: